ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Ղարաբաղի Հայոց Թեմական Հոգևոր Դպրանոցի Հոգաբարձութիւնը և Կենդրոնական Յօբելենական Յանձնաժողովը պարտք են համարում իրենց խորին շնորհակալութիւնը յայտնել այն բոլոր ազգային կուլտուրական, կրթական, բարեգործական, հասարակական հիմնարկութիւններին, նահանգապետին, գաւառապետին և պետական այլ պաշտօնեաներին, մամուլին, հոգևոր և աշխարհական անձանց, Ռուսական համալսարաններին, Կովկասի պետական ժողովրդական դպրոցների տեսուչներին, որոնք նիւթապէս թէ բարոյապէս, անձամբ թէ գրաւոր բարեհաճել են շնորհաւորել Թեմական Դպրանոցի 75-ամեայ յօբելեանը։

Նախագահ Հոգաբարձութեան և Կենդրոնական Յօբելենական Յանձնաժողովի՝ Զաւէն վարդապետ

Քարտուղար՝ Դր. Ղարագեօզեանց

ՅԱՐԴՈՅ ԽՄԲԱԳԻՐ,

«Արարատի տարեւոյս հոկտեմբերի համարում առանձին յաւելուածով տպագրուած է Յոբելենական հանդէսների նկարագրութիւնը, որի մէջ յիշատակուած են այն բոլոր պատգամաւորներն ու հեռագրները, որոնք տօնի առթիւ ուղարկուած են եղել ս. Էջմիածին։ Սակայն ոչ մի տեղ յիշատակուած չէ, թէ այդ Մեծ Տօնին մասնակից է եղել նաև Ցագանրոգի հայ համայնքը, որը յատուկ հեռագրով խնդրել էր ինձնից՝ տեղի հայ գաղութի ղեգացմանց Թարգման հանդիսանալ Նորին Վեհափառութեան Աղգի Սրբազնագոյն Հայրապետի առաջ։ Այդ հեռագիրը յանձնել եմ Յոբելենական Յանձնաժողովի քարտուղար բարձ. Տէր Գէորգ վարդ. Զէորէքչեանին։

Մուսէ վարդապետ

16/XI, 13 թ.
ս. Էջմիածին.